ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԵՀԱՎՀԾ-18/1

ք. Երևան «15» հունվարի 2018 թ.

Համաձայն Երևանի քաղաքապետի 11.01.2018 թվականի N 41-Ա որոշման, Երևանի Ավան վարչական շրջանը. ի դեմս Ավան վարչական շրջանի ղեկավար Մ. Ձավադյանի այսուհետև՝ «Նվիրատու», որը գործում է քաղաքապետարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Խութ» բարեգործական հիմնադրամը ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Կ.Վարդանյանը, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Նվիրառու», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳԻՆԸ

1.1 Սույն պայմանագրով Նվիրատուն Երևան քաղաքի 2018թ. բյուջեով Երևանի Ավան վարչական շրջանի մասով բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 10 բաժնի, 07 խմբի, 01 դասի 4 կետի Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» ծրագրով տնտեսագիտական դասակարգման 4819 «Նվիրատվություններ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով նախատեսված 35 000 000 /Երեսունհինգ միլիոն/ ՀՀ դրամը տրամադրում է Նվիրառուին՝ համաձայն հավելվածի՝ նվիրատվության հատկացման ժամանակացույցի /սոցիալական և բարեգործական ծրագրերին աջակցելու նպատակով/:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Նվիրատուն իրավանք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Նվիրառուի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը:

2.1.2 Պահանջել Նվիրառուից սույն պայմանագրի 1.1 կետում նշված աշխատանքներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին և նորմերին համապատասխան:

2.2 Նվիրատուն պարտավոր է՝

Սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված աշխատանքների կատարման համար հատկացնել ֆինանսական միջոցներ՝ համաձայն սույն պայմանագրի N 2 հավելվածի:

2.3 Նվիրառուն իրավանք ունի՝

Պահանջել Նվիրատուից սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված աշխատանքների կատարման համար հատկացնել ֆինանսական միջոցներ՝ համաձայն սույն պայմանագրի N 2 հավելվածի:

2.4 Նվիրառուն պարտավոր է՝

2.4.1 Ապահովել սույն պայմանագրի 1.1 կետում նշված աշխատանքներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին և նորմերին համապատասխան:

2.4.2 Հաշվապահական փաստաթղթերը վարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Նվիրատուն՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը Նվիրառուին տրամադրում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Նվիրառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, յուրաքանչյուր եռամսյակի ընթացքում՝ ամսեկան կտրվածքով, համամասնորեն, համաձայն սույն պայմանագրի N 1 հավելվածի:

4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

4.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակների իրականացումից հետո, բայց ոչ ուշ, քան պայմանագրի ավարտից 30 օրվա ընթացքում, Նվիրառուն գրավոր Նվիրատուին է ներկայացնում աշխատանքների կատարման մասին հաշվետվություն:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Նվիրառուն պատասխանատվություն է կրում աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.4 կետով նախատեսված դեպքերում Նվիրառուի կողմից պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Նվիրառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի գնի 0,05 %-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 25–ը ներառյալ:

6.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6.3 Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1 հավելվածը, բաղկացած 1 էջից, համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՎԻՐԱՏՈՒ	ՆՎԻՐԱՌՈՒ
Երևանի քաղաքապետարան	«Խութ» բարեգործական հիմնադրամ
ք. Երևան, Արգիշտի 1	ք. Երևան, Ավան, Բրյուսով 3/2
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական	<<ԱՐԱՐԱՏԲԱՆԿ>> ԲԲԸ
վարչություն	
Հ/Հ 900032479256	Հ/Հ 1510035265980100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 00860235
---------- Մ. ՋԱՎԱԴՅԱՆ	---------- Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված1
«15 » հունվարի 2018 թ. կնքված
N ԵՀԱՎԾ-18/1 նվիրատվության հատկացման պայմանագրի

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԸՍՏ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՑՎԱԾՔԻ ԱՃՈՂԱԿԱՆ

N	Եռամսյակ	Գումարը (հազար դրամ)
1	I եռամսյակ	8750.0
2	II եռամսյակ	17500.0
3	III եռամսյակ	26250.0
4	IV եռամսյակ	35000.0

ՆՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան

ք. Երևան, Արգիշտի 1

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900032479256

ՀՎՀՀ 02593108

---------- Մ. ՉԱՎԱԴՅԱՆ

(ստորագրություն)

Կ.Տ.

ՆՎԻՐԱՌՈՒ

«Խուլ» բարեգործական հիմնադրամ

ք. Երևան, Ավան, Բրյուսով 3/2

<<ԱՐԱՐԱՏԲԱՆԿ>> ԲԲԸ

Հ/Հ 1510035265980100

ՀՎՀՀ 00860235

---------- Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

(ստորագրություն)

Կ.Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի և «Խութ» բարեգործական հիմնադրամը-ի միջև 15.01.2018թ. կնքված № ԵՀԱվՎԾ-18/1 սուբսիդիայի հատկացման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան 28 հունիսի 2018թ.

«Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը /այսուհետև՝ Պատվիրատու/, ի դեմս Ավան վարչական շրջանի ղեկավար Մ. Ջավադյանի, որը գործում է քաղաքապետարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Խութ» բարեգործական հիմնադրամը -ը /այսուհետև՝ Կատարող/, ի դեմս գործադիր տնօրեն Ս. Հայրապետյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Կողմերի միջև 15.01.2018թ. կնքված № ԵՀԱվՎԾ-18/1 նվիրատվության հատկացման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները

ա/ պայմանագրի 1.1. կետով նախատեսված 35 000 000 / Երեսունհինգ միլիոն / ՀՀ դրամն նվազեցնել 23 334 000 / Քսաներեք միլիոն երեք հարյուր երեսունչորս հազար / ՀՀ դրամով՝ այդ կետի ընդհանուր գումարը սահմանելով 11 666 000 / Տասնմեկ միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար / ՀՀ դրամ:

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 28.06.2018թ.-ից, կցվում է կողմերի միջև կնքված սուբսիդիայի հատկացման պայմանագրին և հանդիսանում դրա անբաժանելի մասը:

3.Սույն համաձայնագրում պայմանագրի և դրա հավելվածների չհիշատակված պայմանները թողնվում են անփոփոխ:

4. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 հավասարազոր օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՆՎԻՐԱՏՈՒ	ՆՎԻՐԱՌՈՒ
Երևանի քաղաքապետարան	«Խութ» բարեգործական հիմնադրամ
ք. Երևան, Արգիշտի 1	ք. Երևան, Ավան, Բրյուսով 3/2
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	<<ԱՐԱՐԱՏԲԱՆԿ>> ԲԲԸ
Հ/Հ 900032479256	Հ/Հ 1510035265980100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 00860235
---------- Մ. ՋԱՎԱԴՅԱՆ	---------- Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.